ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 330 – Ա

02 հուլիսի 2021 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի և 2-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Միացման ձևով «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, այն՝ «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու գործընթացը կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վարդանյան Լուսինե	- Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, նախագահ
Ղուկասյան Վերգինե	- Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ
Խաչատրյան Արամ	- Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ- գլխավոր իրավաբան
Սարգսյան Նելսոն	- Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ- գլխավոր հաշվապահ
Բիձյան Հակոբջան	- Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպել միացման ձևով «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, այն՝ «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու գործընթաց.
2) աշխատանքներն իրականացնելու ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին.
3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

02.07.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ